## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18

Էլ. Փոստ vayktown@mail.ru

*22 ՀՈՒՆԻՍԻ 2022թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 112-Ա

## ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱԿՈԲ ՅՈՒՐԻԿԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետին, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ կետին համապատասխան և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով և ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հիմք ընդունելով քաղ. Հակոբ Քոչարյանի 03.06.2022թ. դիմումը՝ ինքնակամ կառույցը օրինականացնելու մասին

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 45/1 հասցեում գտնվող քաղ. Հակոբ Քոչարյանի կողմից կառուցված 116.1քմ մակերեսով բնակելի տունը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0.045 հա, համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականություն: ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2022D8ULV1:

2.Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Բնակելի տունը և նրա զբաղեցրած 0.045 հա հողատարածքը հասցեավորել Վայք

համայնք Վայք քաղաք Ջերմուկի խճուղի 45/1 հասցեում:
4.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:
5 Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 116.1 քմ մակերեսով կառույցը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.045 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով, օրինականացման համար սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Հակոբ Քոչարյանին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*23 ՀՈՒՆԻՍԻ 2022թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 113-Ա

## ՆԻՆԵԼ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ 01.03.2022Թ. ԹԻՎ 49-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.01.03.2022թ. թիվ 49-Ա որոշման մեջ նշված «0.75 դրույքաչափով » բառերը փոխարինել «1 ամբողջական դրույքաչափով» բառերով:
2.Ֆինանսական բաժնին ղեկավարվել օրենքով սահմանված կարգով:
3.Սույն հրամանը ուժի մեջ է ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*24 ՀՈՒՆԻՍԻ 2022թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 114-Ա

## ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՅԴ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22.07.2015 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 34-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին» թիվ 12-Ն հրամանով, հիմք ընդունելով Վայոց ձորի մարզպետի 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 01/08.2/0298 գրությունը և Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 18-ի «Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը հաստատելու, Վայք համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 43 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 40-Ա որոշումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել Վայք համայնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմը՝

Նախագահ՝ Մաթևոսյան Մխիթար Կոլյայի - Վայք համայնքի ղեկավար (ի պաշտոնե)

Անդամներ՝ Հովհաննիսյան Վարդան Վիկտորի- Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի տեղակալ

Մաղաքյան Նարինե Հենրիկի - Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Հախվերդյան Ռուզաննա Արարատի - Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

Արամյան Անուշ Խաչատուրի-Վայք համայնքի ավագանու անդամ

Մանուչարյան Հրաչիկ Գավրուշայի-Վայք համայնքի ավագանու անդամ

Կոստանյան Վարդան Ալբերտի-Վայք համայնքի ավագանու անդամ

2.Հաստատել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը՝ համաձայն հավելված N 1-ի և հավելված N 2-ի:

3. Մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքների տեղնիկական սպասարկումն իրականացնող լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 3.2-7) Մերի Ղամբարյանին:

4.«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 2015 թվականի հուլիսի 22-ի «Վայք համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատելու, այդ հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու և Վայք համայնքի ղեկավարի22.07.2015 թվականի թիվ 34-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին»:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18

Էլ. Փոստ vayktown@mail.ru

*28 ՀՈՒՆԻՍԻ 2022թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 115-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Հերհեր բնակավայրում գտնվող՝ ծածկագիր 10-028-0167 0024, 0,02417հա հողամասը և շինությունը հասցեավորել որպես Վայք համայնք, Հերհեր բնակավայր Բազմաղբյուր թաղամաս 13 հասցեում:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*28 ՀՈՒՆԻՍԻ 2022թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 116-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՎԱԳ ԳԵՎՈՐԳԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետին, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ կետին համապատասխան և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով քաղ.Ավագ Մովսիսյանի 25.06.2022թ. դիմումը՝ ինքնակամ կառույցը օրինականացնելու մասին.333

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Հերհեր բնակավայրի բազմաղբյուր 13 հասցեում գտնվող քաղ. Ավագ Մովսիսյանի կողմից կառուցված 61.13 քմ մակերեսով շինությունը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0.02417հա, համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականության վկայական N 28102019-10-0018:
2.Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 61.13 քմ մակերեսով կառույցը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.02417 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով, օրինականացման համար սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Ավագ Մովսիսյանին ։

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**

# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18

Էլ. Փոստ vayktown@mail.ru

*01 ՀՈՒԼԻՍԻ 2022թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 117-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱԾԿԱԳԻՐ 10-028-017-011-003ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Հերհեր բնակավայրում գտնվող՝ ծածկագիր 10-028-017-011-003, 0,004 հա հողամասը և շինությունը հասցեավորել որպես Վայք համայնք, Հերհեր բնակավայր 1-ին փողոց, 2/1 հասցեում:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**